

Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ. Գիրք պահոց, աշխատասիրությանը Կիմ Մուրադյանի, Մայր աթոռ Ս. Էջմիածնի հրատ. (Եկեղեցական մատենագրություն Բ), Ս. Էջմիածին, 2008, 519 էջ:

Վերջապես լույս է տեսել արևելաքրիստոնեական եկեղեցու հայրերից մեկի՝ Բարսեղ Կեսարացու՝ երեսուներեք ճառից բաղկացած, «Գիրք պահոց» վերնագիրը կրող հայերեն թարգմանությամբ ժողովածուի քննական բնագիրը, որը վաղամեռիկ Կիմ Մուրադյանը կազմել էր մոտ քսան տարի առաջ: Այն հրատարակության է պատրաստել Գուրգեն Գասպարյանը (առանձին ճառեր հրատարակել էր Մուրադյանը¹, իսկ մինչ այդ տպագրվել էր «Գիրք պահոց»-ի մաս կազմող ևս մեկ ճառ²):

Հայագետ Կիմ Մուրադյանն իր կարճատև գիտական կյանքը հիմնականում նվիրեց կապադովկացի երեք նշանավոր հայրերի՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու, հայերեն թարգմանությունների հրատարակմանն ու ուսումնասիրմանը: Նրան են պատկանում հայ թարգմանական գրականության ամենավաղ հուշարձաններից մեկի՝ Բարսեղի «Վեցորյայի» քննական հրատարակությունը³, հայ միջնադարյան հեղինակների վրա մեծ ազդեցություն գործած այդ երկին նվիրված մի մենագրությո-

յուն⁴, նաև մյուս երկու կապադովկացիների հայերեն թարգմանությունների գրական ճակատագիրը լուսաբանող գրքեր (դրանցից վերջինը տպագրվեց հետմահու⁵):

«Գիրք պահոց»-ի լույս ընծայմամբ գրեթե ամբողջանում է Բարսեղի հայերեն ժառանգության հրատարակումը: Նրա անուով հայտնի հիսունմեկ կանոնները⁶ համառոտված ու խմբագրված տարբերակն են Բարսեղի հունարեն կանոնական նամակների, որոնք կանոնական հավաքածուներում բաղկացած են իննսուներկու գլխից: Բարսեղի պատարագի որոշ մասեր թարգմանվել են հայերեն և ներառվել հայկական եկեղեցու պատարագի մեջ⁷: Տարիներ առաջ լույս է տեսել Բարսեղի մեկ այլ կարևոր ծավալուն աշխատության՝ վանական կյանքը կարգավորող «Գիրք հարցողաց»-ի քննական հրատարակությունը՝ իտալերեն թարգմանությամբ հանդերձ⁸: Չհրատարակված են մնում Բարսեղի մի քանի աղոթք⁹ և, ինչ-

¹ Բարսեղ Կեսարացի. «Առ ընչեղան», «ԳՎաշխողաց», «ԳԱրբեցողաց». տե՛ս Կ. Մ ր ա ճ Կ Ե Ն. Три гомилии Василия Кесарийского в древнеармянском переводе. – Кавказ и Византия, вып. 1. Ереван, 1979, с. 200–230; Բարսեղ Կեսարացի. «Գարկացողաց», «ԳՄախանաց», «Յաղագս գոհութեան». տե՛ս Կ. Մ ր ա ճ Կ Ե Ն. Древнеармянские переводы гомилий Василия Кесарийского. – Кавказ и Византия, вып. 3. Ереван, 1982, с. 180–215.

² Պ. Տ ե թ - Պ ն դ ն ո յ ա ն. Երանելույն Բարսղի եպիսկոպոսի Կապադովկացուց ասացեալ ի ծնունդն Քրիստոսի. – «Հանդես ամսօրյա», 1968, էջ 419-438:

³ Բարսեղ Կեսարացի. Յաղագս վեցորեայ արարչութեան, աշխատասիրությամբ Կ. Մուրադյանի, Երևան, 1984:

⁴ Կ. Մ ու ը յ ա ն. Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցորեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976:

⁵ Կ. Մ ու ը յ ա ն, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1983 և Կ. Մ ու ը յ ա ն. Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1993:

⁶ Կանոնք Բարսղի առ Ամփիլոքիոս. գլուխք ՕՍ. – Կանոնագիրք հայոց, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հ. Ա, Երևան, 1964, էջ 329-362:

⁷ P.-P. J o a n n o u. Discipline générale antique (IV-IX s.), t. II: Les canons des Pères Grecs, Roma, 1963, p. 92-187.

⁸ Յ. Գ ա թ ը Վ ա ն. Սրբազան պատարագամատոյցք հայոց, Վիեննա, 1897, էջ 120-159, 180-216:

⁹ Basilio di Cesarea, Il libro delle Domande, edito da G. Uluhogian (Corpus Scriptorum Christianorum Orientalium, 536, 537, Scriptores Armeniaci 19, 22), Lovain, 1993.

¹⁰ Տե՛ս Պ. Տ ե թ - Պ ն դ ն ո յ ա ն. Ս. Բարսեղ Կեսարացի և իր գրությունները հայերեն

պես ինքը՝ Կիմ Մուրադյանն է նշում, «որոշ թղթեր և ճառեր, որոնք երբևէ բյուզանդական մատենագրի գրքերի կամ ժողովածուների մաս չեն կազմել» (էջ 10):

Գրքի Առաջաբանի մի ընդարձակ բաժին (էջ 11-38) քննում է «Պահոց գրքի» ազդեցությունը հայ հեղինակների վրա՝ ծավալուն մի թեմա, որը Կիմ Մուրադյանը մանրակրկիտ ուսումնասիրել էր. այն վերնագրված է «Պահոց գրքի» հետքերը հայոց միջնադարյան գրականության մեջ»: Նախկինում բանասերների նկատած հետքերից բացի, Մուրադյանը նշել է այդպիսիք Հովհան Մանդակունու, Հովհան Օձնեցու, Ստեփանոս Մյունեցու, Գրիգոր Նարեկացու, Ստեփանոս Տարոնացի Ասողիկի, Վարդան Այգեկցու, Վանական Վարդապետի, Հովհաննես Երզնկացու մոտ: Չարմանալի է այն փաստը, որ նա նույնիսկ գուցահեռներ է նկատել մի շարք անտիպ գործերի հետ. դրանք հայտնաբերելը, անշուշտ, հսկայական աշխատանք է պահանջել: Ուշագրավ են Մահակ Պարթևի մի նամակի հետ Մուրադյանի գտած գուցահեռները, ինչը վկայում է, որ ճառերի մեծ մասը բավական վաղ գոյություն են ունեցել հայերեն թարգմանությամբ¹¹: Այլ հեղինակների հետ գուցահեռների մի պատկանելի շարք էլ գուտ թվարկված է մի ծանոթագրության մեջ:

«Պահոց գրքի» քննական բնագիրը Կ. Մուրադյանը կազմել է քսանյոթ ձեռագրի հիման վրա. քսանվեցը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, մեկը՝ Վենետիկի Մխիթարյան միաբանությունում. վերջինս երկաթագիր է, գրվել է XI-XII դդ., և ժողովածուն պարունակող հնագույն ձեռագիրն է: Բնագիրը պատրաստված է խնամքով ու հմտությամբ. ճիշտ տարրնթերցում ընտրելիս Մուրադյանը

հաշվի է առել հունարեն սկզբնագրի ընթերցումը, առանձին ճառեր պարբերությունների է բաժանել ու դրանք համարակալել սկզբնագրի բաժանումներին համապատասխան:

Գ. Գասպարյանը գիրքը հրատարակության է պատրաստել բարեխղճորեն. այն ներկայացված է լավ ընկալելի տեխնիկական ձևավորմամբ: Երբեմն նկատվող վրիպակները չեն խանգարում բնագրի ճիշտ ընթերցմանը: Օրինակ՝ ակնհայտ է, որ «մեծի ծնունդս կանանց ոչ ոք է, քան Յովհաննես Մկրտիչ» (էջ 71) պետք է կարդալ՝ «մեծ ի ծնունդս կանանց...» և այլն:

Ծանոթագրություններում Կիմ Մուրադյանը զետեղել է բնագրեր ու բնագրային հատվածներ՝ թվով ութ. դրանք «հիշատակարանային բնույթի հավելումներ», ճառերի մասերի կամ ամբողջական ճառերի խմբագրված տարբերակներ են: Ծանոթագրությունները պարունակում են մատենագրական տեղեկություններ առանձին ճառերի հունարեն սկզբնագրերի մասին, տեքստաբանական բնույթի անհրաժեշտ դիտարկումներ, բառարանագրական դիտողություններ հազվագյուտ բառերի կիրառության, հունարեն այս կամ այն բառի կամ արտահայտության ուշագրավ, հաճախ՝ բառացի թարգմանության մասին: Գիրքը մեծապես շահել է վերջում կցված անձնանունների և տեղանունների ցանկերից¹²: Ուզում ենք մեր գոհունակությունը հայտնել այս կարևոր գրքի լույս ընծայման առթիվ և «Եկեղեցական մատենագրություն» մատենաշարին ցանկանալ նոր արժեքավոր հրատարակություններ:

ԳՈՂԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

թարգմանությամբ. - «Հանդես ամսօրյա», 1969, էջ 129-158, 257-291, 385-398:

¹¹ Ուշ թարգմանություն է միայն «Ի ծնունդ Փրկչին» ձառը. ըստ Ս. Արևշատյանի, այն պատկանում է հունարեն դպրոցի չորրորդ շրջանին. տե՛ս С. С. А р е в ш а т я н. Формирование философской науки в древней Армении (V-VI вв.). Ереван, 1973, с. 188.

¹² Նույն մատենաշարի հաջորդ հատորը պարունակում է կապադովկացի մյուս հոր՝ Գրիգոր Նյուսացու մարդակազմական՝ մինչ այդ երբևէ չտպագրված երկը. Ս. Գրիգոր Նիսացի. Տեսությին ի մարդյն կազմութիւն, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Ստեյլա Վարդանյանի (Եկեղեցական մատենագրութիւն Գ), Ս. Էջմիածին, 2008, 269 էջ: